# Արձանագրություն N 3

## ԱՔ-ԲՄԱՇՁԲ-26/1 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Արմավիր

24 փետրվարի 2026թ.
ժամը՝ 17:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Հայրապետյան
Հանձնաժողովի
Գնահատող անդամներ՝ Հովհաննես Առաքելյան, Սյուզաննա Իսախանյան
Բացող անդամներ՝ Օքսաննա Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մարինե Համբարյան
Նիստին ներկա չէր բացող անդամներից Իրինա Գալստյանը

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
**(Լիանա Հայրապետյան)**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Ներկայացված գնային առաջարկների մասին,
4. Գնահատման մասին,
5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
6. Ներկայացված հիմնավորումների մասին:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### 2. Անհամապատասխանությունները շտկելու մասին
**(Լիանա Հայրապետյան)**

**Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ, ուստի հանձնաժողովը որոշել էր.**

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով ծանուցել **«Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ – «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիումին**, որը պետք է ներկայացնի շտկված փաստաթղթը մինչև 24.02.2026թ. 17:30-ը ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթղթը:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

### 3. Ներկայացված գնային առաջարկների մասին
**(Լիանա Հայրապետյան)**

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Գինն առանց ԱԱՀ | ԱԱՀ | Ընդհանուր | Նախահաշվային գին |
| 1 | **Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի գյուղի թիվ 10 փողոցի հիմնանորոգման աշխատանքներ** | | | | **94 177 520** |
| | «Նարիմանյան» ՍՊԸ | 66650000 | 13330000 | 79980000 | |
| | «Ճանշինվարպետ» ՓԲԸ | 69600000 | 13920000 | 83520000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| «Ադիբեկ» ՍՊԸ | 69812500 | 13962500 | 83775000 | |
| «Ուրբան դեվելոփմենթ» ՍՊԸ – «ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում | 69830000 | 13966000 | 83796000 | |
| «ԵՎՐՈԲՈՒԴ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ | 70083771 | 14016754 | 84100525 | |
| «ԲԻԼԴՐ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-«Բիդեք» ՍՊԸ ՀԳ | 72202700 | 14440540 | 86643240 | |
| ԲԼԵՍԿ ՍՊԸ հայաստանյան մասնաճյուղ | 78200000 | 15640000 | 93840000 | |

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## 4.Գնահատման մասին

(Լիանա Հայրապետյան)

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտերի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| *Ընտրված մասնակից ճանաչել՝* | | |
| 1 | «Նարիմանյան» ՍՊԸ | 1 |
| *երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել* | | |
| 1 | «Ճանշինվարպետ» ՓԲԸ | 1 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝0:***

## 5. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին

(Լիանա Հայրապետյան)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

## 6. Ներկայացված հիմնավորումների մասին

(Լիանա Հայրապետյան)

Էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ **հիմնավորումներ չեն ներկայացվել:**

***Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լիանա Հայրապետյան

անդամներ՝ Հովհաննես Առաքելյան

Սյուզաննա Իսախանյան

Օքսաննա Պետրոսյան

Քարտուղար՝ Մարինե Համբարյան